



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2020ԹՎԱԿԱՆԻ N 20-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2020
ԹՎԱԿԱՆԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-
րդ և 42-րդ կետերով, հաշվի առնելով Տաթևի համայնքապետարանում 2020 թվականի ապրիլի
10-ին անցկացված հանրային լսումների N 01 արձանագրությունը, համաձայն համայնքի
ղեկավարի առաջարկության, ավագանին **դրոշում է**.

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային
հատկացումներ(սուբվենցիաներ) ստանալու նպատակով Տաթև համայնքի կողմից 2020
թվականի բյուջետային ֆինանսավորման ներկայացվող ծրագրային հայտին՝ համաձայն
հավելված N1-ի:

2.Բյուջետային ֆինանսավորման հայտերը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ տարածքային
կառավարման և զարգացման նախարարություն՝ գնահատման և պետական նպատակային
հատկացումներ ստանալու նպատակով:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ

ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՂՐԱԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ՄՈՒՐԱԴ ՄԻՄՈՆՅԱՆ